Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2025 թ. որոշմամբ
«ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԴԱՎԹԱՇԵՆ ԴԱՎԹԱՇԵՆ ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 6 ԲՆ.22
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1170357
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2021-03-30
1.5 ՀՎՀՀ-ն		00234033
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)55238917
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.csiefoundation.am
1.8 Էլեկտրոնային փոստը		a.karapetyan@philin.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ռաֆֆի Պաղճեան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	8	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ԱԹՍ-ների վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքների իրականացում	210,649,254
	Խորհրդատվական ծառայություններից մուտք	1,107,000
	Լիցենզիայի օգտագործման թույլտվությունից մուտք	1,645,200,000

8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ԱԹՍ-ների վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքների իրականացում	247,371,840	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,859,610,992	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	247,371,840	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 25 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by MARGARYAN ANAHIT 7914810347
Date: 2025.07.01 16:34:58 AMT

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Գործունեության մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամին՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 5-ում հաշվետու տարում Հիմնադրամը վերաներկայացրել է 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները: Մենք աուդիտի ենք ենթարկել նաև այդ վերաներկայացումները:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ

ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

30 հունիսի 2025թ.

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Գործունեության մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2024թ.	2023թ. (վերաներ-կայացված)
Ծառայությունների մատուցումից հասույթ	6	3,684,550	830,473
Ծառայությունների ինքնարժեք	6	(3,700,779)	(654,713)
Համախառն շահույթ		**(16,229)**	**175,760**
Նվիրատվությունից եկամուտ	7	256,989	210,417
Այլ եկամուտ		102	656
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր		(4,548)	(48,052)
Նվիրաբերությունների գծով ծախսեր		(7,392)	(34,405)
Հատուցումներ աշխատակիցներին		(173,724)	(115,288)
Միջոցառումների գծով ծախսեր		(20,184)	(1,177)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(7,276)	(6,675)
Մաշվածություն և ամորտիզացիա		(4,898)	(2,650)
Բանկային ծախսեր		(3,827)	(1,250)
Այլ ծախսեր		(17,298)	(1,579)
Գործառնական գործունեությունից արդյունք		**1,715**	**175,757**
Ֆինանսական եկամուտ		2,738	1,628
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս		(31,590)	(58)
Արդյունք մինչև հարկերը		**(27,137)**	**177,327**
Շահութահարկի գծով ծախս	8	(34,501)	(33,041)
Տարվա արդյունք		**(61,638)**	**144,286**

Գործունեության մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ. (վերաներ-կայացված)	1 հունվար 2023թ. (վերաներ-կայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ		17,099	12,977	10,892
Ոչ նյութական ակտիվներ		258	-	54
Տրամադրված փոխառություններ	10	15,331	16,493	14,865
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**32,688**	**29,470**	**25,811**
Ընթացիկ ակտիվներ				
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	12	3,499,257	783,220	33,376
Պաշարներ		40,811	37,942	36,963
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	36,417	35,346	5,047
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**3,576,485**	**856,508**	**75,386**
Ընդամենը ակտիվներ		**3,609,173**	**885,978**	**101,197**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ. (վերաներ-կայացված)	1 հունվար 2023թ. (վերաներ-կայացված)
Զուտ ակտիվներ և պարտավորություններ				
Զուտ ակտիվներ				
Կուտակված արդյունք		74,761	136,399	(7,887)
Ընդամենը զուտ ակտիվներ		**74,761**	**136,399**	**(7,887)**
Պարտավորություններ				
Ոչ ընթացիկ				
Ակտիվներին վերաբերող շնորհներ		17,357	12,978	10,946
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**17,357**	**12,978**	**10,946**
Ընթացիկ				
Եկամտին վերաբերող շնորհներ	14	80,457	129,220	64,502
Կրեդիտորական պարտքեր	15	3,428,401	574,389	40,703
Շահութահարկի գծով պարտավորություն		8,197	32,992	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**3,517,055**	**736,601**	**105,205**
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		**3,609,173**	**885,978**	**108,264**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունիսի 30-ին՝

Ռաֆֆի Պաղճյան
Տնօրեն

Աստղիկ Կարապետյան
Հաշվապահական ընկերության ներկայացուցիչ

ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴ FOUNDATION 00234033

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ (նախքան վերաներկայացումը)	(14,894)	(14,894)
Վերաներկայացում (տե՛ս Ծանոթագրություն 5)	7,007	7,007
2023թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացումից հետո)	**(7,887)**	**(7,887)**
Տարվա արդյունք	144,286	144,286
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**136,399**	**136,399**
Տարվա արդյունք	(61,638)	(61,638)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**74,761**	**74,761**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Նվիրատվություններից ստացված դրամական միջոցներ	206,749	277,167
Մատակարարներից ստացած դրամական միջոցներ	1,647,873	273,750
Ստացված այլ դրամական միջոցներ	103	656
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(811,324)	(365,041)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(125,702)	(85,554)
Պետական բյուջե վճարված դրամական միջոցներ (բացի շահութահարկից)	(906,747)	(34,256)
Տրամադրված դրամային նվիրատվություններ	(3,796)	(29,610)
Այլ դրամական վճարումներ	(4,866)	(2,242)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**2,290**	**34,870**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(8,743)	(4,753)
Տրամադրված փոխառությունների մարում	3,900	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(4,843)**	**(4,753)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	(2,553)	30,117
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	3,624	181
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	35,346	5,048
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	**36,417**	**35,346**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» Հիմնադրամ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝

- Հայաստանի Հանրապետությունում գիտության, կրթության, ռազմարդյունաբերության և տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտներում նորարարությունների ներդնումը և զարգացումը;
- Հայաստանի Հանրապետությունում գիտության, կրթության, ռազմարդյունաբերության և տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտներում հետազոտության և զարգացման իրականացումը;
- Գիտության, կրթության, ռազմարդյունաբերության և տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտների մասնագետներին, կազմակերպություններին և այլ անձանց աջակցումը;
- Գիտության և կրթության ոլորտի նորարարությունների համար հատուկ միջավայրի ստեղծումը և զարգացումը, հայաստանյան և միջազգային տեխնոլոգիական և ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացումը;
- Տեխնոլոգիական արդյունաբերության համար ռազմավարական գիտական ուղղությունների խթանումը և կիրառական լուծումների տրամադրումը;
- Կրթության, մասնագիտական ուսուցման և գիտական նորարարությունների զարգացումը;
- Սփյուռքի և հայաստանյան ընկերությունների ինտեգրումը առաջատար գիտական հնարավորություններին :

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Գիտական Նորարարության և Կրթության Կենտրոն» Հիմնադրամը (Հիմնադրամ) հիմնադրվել է 2021թ. մարտի 30-ին՝ որպես ոչ առևտրային կազմակերպություն համաձայն ՀՀ օրենսդրության և իր կանոնադրության:

Հիմնադրամի միակ հիմնադիր է Ռաֆֆի Պաղճեանը:

Հաշվետու տարում Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 8 մարդ (2023թ. -ին՝ 10 մարդ):

Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 3-րդ Թաղամաս 6 բն.22:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով շահույթ չհետապնդող կազմակերպությունների և արտարժույթով ստացվող դրամաշնորհներ և ծախսեր ունեցող հիմանդրամների համար: Համաշխարհային գնաճը և էներգիայի աճող գները ազդում են ծրագրերի իրականացման ծախսերի վրա, հատկապես այն ոլորտներում, որոնք կախված են ներմուծվող ապրանքներից և ծառայություններից:

Ղեկավարության գնահատմամբ վերոնշյալ իրադարձությունները նշանակալի ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Հիմնադրամը շահույթ չհետապնդող ընկերություն է, որը ֆինանսավորվում է իր կապակցված կողմերից՝ իրականացնելու կրթական, գիտական և հետազոտական ծրագրեր՝ ձգտելով աջակցել Հայաստանի Հանրապետությունում առաջատար գիտական տեխնոլոգիաների, ռազմարդյունաբերության և տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտներում նորարարությունների ներդնմանը և զարգացմանը, և չկան այնպիսի գործոններ, որոնք կասկածի տակ կդնեն այդ գործողությունների ու նախաձեռնությունների շարունակական լինելը:

Չնայած այս մարտահրավերներին, քաղաքացիական հասարակական կազմակերպությունները հարմարվում են՝ օպտիմալացնելով գործառնական ծախսերը, փնտրելով տարբեր ֆինանսավորման աղբյուրներ և ընդլայնելով տարածաշրջանային համագործակցությունները: Բացի այդ, կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները նաև հիմք են տալիս ավելի կայուն և թափանցիկ համագործակցության համար: Այնուամենայնիվ, ծրագրի իրականացման արդյունավետությունը մեծապես կախված կլինի Հիմնադրամի կարողությունից՝ շրջանցելու այս տնտեսական ռիսկերը և համապատասխանաբար հարմարեցնելու իր ռազմավարություններին:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Հիմնադրամը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում չկան գործող օրենսդրական պահանջներ կլիմային առնչվող հարցերի վերաբերյալ: Հետևաբար, Հիմնադրամը չի նախաձեռնել

գնահատում և կլիմային առնչվող ռիսկերը չի ներառել իր ֆինանսական հաշվետվությունների կամ ռիսկերի կառավարման շրջանակներում:

4.3 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	413.89	447.90

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

4.4 Հասույթ

Հասույթը ձևավորվում է խորհրդատվական ծառայությունների մատուցումից և լիցենզիաների օգտագործման իրավունքի տրամադրումից:

Հասույթի ճանաչման ժամանակ Հիմնադրամն առաջնորդվում է ՖՀԴՄ 15-ի դրույթներով, այն է.

- Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- Բացահայտել կատարման պարտականությունները
- Որոշել գործարքի գինը
- Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև և
- Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Հիմնադրամը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Հիմնադրամը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Հիմնադրամը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Հիմնադրամը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ

պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

4.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգիչ և սարքավորումներ	- 1-3 տարի
Տնտեսական գույք	- 8 տարի:

4.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

4.7 Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները ենթակա չեն բաժանման վերջինիս հիմնադիրների միջև՝ ոչ սովորական գործունեության, ոչ էլ դրա լուծարման դեպքում:

Կուտակված արդյունքը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների ամբողջ շահույթը:

4.8 Շնորհներ և նվիրատվություններ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Ինչպես սահմանված է Հիմնադրամի կառավարման փաստաթղթերում, անսահմանափակ նվիրատվությունները ընդհանուր նպատակների համար են: Ուստի, անսահմանափակ ֆոնդ դասակարգված նվիրատվությունները ճանաչվում են եկամուտ, երբ դառնում է ստացման ենթակա: Անսահմանափակ նվիրատվությունները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

4.9 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները: Ընդ որում՝ ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները հարկման տեսանկյունից հարկվող եկամուտ չեն, և դրանց հաշվին կատարված ծախսերն էլ հարկային նվազեցում չեն:

4.10 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.12 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

5 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Հիմնադրամը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Հիմնադրամը վերանայել է իր խոշոր մատակարարներից մեկի պայմանագրային դրույթները և կատարել մնացորդների վերահաշվարկներ: Արդյունքում վերաներկայացվել են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հետևյալ կերպ.

- Կրեդիտորական պարտքերի մնացորդները նվազել են 16,996 հազար ՀՀ դրամով,
- Պաշարների մնացորդը ավելացել է 1,537 հազար ՀՀ դրամով,
- Եկամտին վերաբերող շնորհների մնացորդը նվազել է 7,648 հազար ՀՀ դրամով,
- Կուտակված արդյունքը ավելացել է 17,577 հազար ՀՀ դրամով, որից 7,007 հազար ՀՀ դրամը վերաբերում է 2022թ.-ի ֆինանսական արդյունքին,

- Ծառայությունների ինքնարժեքը նվազել է 10,529 հազար ՀՀ դրամով,
- Դեբիտորական պարտքեր և կանխավճարների մնացորդը նվազել է 8,604 հազար ՀՀ դրամով:

6 Ծառայությունների մատուցումից հասույթ և ինքնարժեք

Հաշվետու տարում Հիմնադրամն իրեն կապակցված ոչ ռեզիդենտ կազմակերպությանը փոխանցել է ծրագրային լիցենզիայի օգտագործման թվով 2,302 իրավունք (2023թ.՝ 450 իրավունք)

Հասույթը ըստ ծառայությունների տեսակի բաշխվել է հետևյալ կերպ.

	2024թ.	2023թ
Լիցենզիայի օգտագործման թույլտվություն	3,683,200	576,000
Խորհրդատվական ծառայություն	-	254,473
Դասընթացների կազմակերպում	1,350	-
	3,684,550	**830,473**

Ինքնարժեքը ըստ ծառայությունների տեսակի բաշխվել է հետևյալ կերպ.

	2024թ.	2023թ. (վերաներ-կայացված)
Լիցենզիայի օգտագործման թույլտվություն	3,515,852	351,924
Խորհրդատվական ծառայություն	184,927	302,789
	3,700,779	**654,713**

7 Նվիրատվությունից եկամուտ

	2024թ.	2023թ. (վերաներ-կայացված)
Եկամտին վերաբերող շնորհներից եկամուտ (տե՛ս Ծանոթագրություն 14)	246,236	207,767
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	4,898	2,650
Այլ	5,855	-
	256,989	**210,417**

8 Շահութահարկի գծով ծախս

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	34,501	33,041
	34,501	**33,041**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(27,137)		177,327	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	(4,885)	18.0	31,919	18.0
(Չհարկվող եկամուտ) չնվազեցվող ծախսեր, զուտ	39,386	(145.1)	1,122	(0.6)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	**34,501**	**(127.1)**	**33,041**	**18.6**

9 Ներդրումներ օտարերկրյա կազմակերպություններում

2021թ. դեկտեմբերին Հիմնադրամը ոչ կառավարող անդամի կարգավիճակով 200,000 ԱՄՆ դոլար ներդրում է կատարել ԱՄՆ-ում գրանցված ԻՍԹ Մենեջմենթ կազմակերպությունում: 2022թ.-ին, հաշվի առնելով այդ կազմակերպության գործունեության արդյունքները և ֆինանսական տեղեկատվության բացակայությունը, այդ ներդրումը արժեզրկվել է: 2024թ.-ին Հիմնադրամն իրականացրել է ներդրման արժեզրկման վերանայում և հակադարձման համար բավարար հայտանիշներ չհայտնաբերելու արդյունքում ղեկավարությունը գնահատել է, որ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումը շարունակում է արժեզրկված լինել:

10 Տրամադրված փոխառություններ

2021թ.-ին Հիմնադրամը տրամադրել է 25,000 հազար ՀՀ դրամ սկզբնական արժեքով անտոկոս փոխառություն, որոնց մարման ժամկետը պայմանագրով անժամկետ է: Ղեկավարությունը գնահատել է, որ տրամադրված փոխառությունն ամբողջությամբ կմարվի մինչև 2027թ. օգոստոսի 9-ը: Տրամադրված փոխառությունը սկզբնապես ճանաչվել են իրական արժեքով, որը որոշվել է որպես բոլոր դրամական հոսքերի ներկա արժեք զեղչած նմանատիպ գործիքների համար կիրառելի շուկայական տոկոսադրույքով, որը կազմել է 11%: Համապատասխան տոկոսային ծախսը և եկամուտը ճանաչվել են գործունեության մասին հաշվետվությունում:

Փոխառության անվանական արժեք	25,000
Փոխառության մարում	(1,000)
Սկզբնական ճանաչումից վնաս	(11,605)
Հակադարձումից եկամուտ	4,098
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,493
Փոխառության մարում	(3,900)
Հակադարձումից եկամուտ	2,738
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**15,331**

11 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

11.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն թիվ 4.5-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ	15,331	16,493
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,497,970	722,817
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	36,417	35,346
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**3,549,718**	**774,656**

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ. (վերաներ-կայացված)
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,144,422	360,167
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	**3,144,422**	**360,167**

12 Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ. (վերաներ-կայացված)
Առևտրային դեբիտորական պարտքեր	3,497,970	722,817
Տրված կանխավճարներ ապրանքների և ծառայությունների գծով	1,287	1,754
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	-	58,649
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**3,499,257**	**783,220**

2024թ. և 2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքի ողջ մնացորդը վերաբերում է Հիմնադրամի հետ կապակցված մեկ գործընկերոջը, որին Հիմնադրամը հաշվետու տարում մատուցել է լիցենզիայի օգտագործման իրավունքի փոխանցման ծառայություններ (տե՛ս Ծանոթագրություն 6):

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Բանկային հաշիվներ, այդ թվում՝		
Մնացորդներ ՀՀ դրամով	4,798	28
Մնացորդներ այլ արժույթներով	31,619	35,318
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**36,417**	**35,346**

14 Եկամտին վերաբերող շնորհներ

	2024թ.	2023թ. (վերաներ-կայացված)
Տարեսկզբի մնացորդ	129,220	64,502
Ավելացումներ	206,750	277,167
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհներին	(9,277)	(4,682)
Եկամտի ճանաչում (տե՛ս Ծանոթագրություն 7)	(246,236)	(207,767)
Տարեվերջի մնացորդ	**80,457**	**129,220**

Բոլոր ավելացումները ստացվել են Հայ Վիրավոր Հերոսների Աջակցման Հիմնադրամ Ինք.-ից:

15 Կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ. (վերաներ-կայացված)
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,144,422	360,167
Պարտավորություններ աշխատակիցների արձակուրդային օրերի գծով	9,587	2,874
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	74,434	193,446
Այլ	199,958	17,902
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**3,428,401**	**574,389**

16 Կապակցված կողմեր

Կողմերը սովորաբար համարվում են կապակցված, եթե կողմերը գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո կամ եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու ունակություն կամ կարող է էական ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն իրականացնել մյուս կողմի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր կապակցված կողմի հարաբերությունները դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերությունների էությանը, այլ ոչ թե միայն իրավական կողմին:

Հիմնադրամի հիմնադիրների մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում: Մյուս կապակցված կողմերը ներառում են հիմնադիրների հետ կապակցված ընկերությունները: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամն ունի համապատասխան ընթացակարգեր՝ կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացնելու և պատշաճ կերպով բացահայտելու համար:

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամը կապակցված կողմերին մատուցել է 3,684,550 հազար ՀՀ դրամի ծառայություն, 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդը կազմել է 3,497,457 հազար ՀՀ դրամ (2023թ.-ին՝ 830,473 հազար ՀՀ դրամ, իսկ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդը 722,817 հազար ՀՀ դրամ): Հիմնադրամի ղեկավար անձնակազմը նրա հիմնադիրն է, ով գործում է կամավորության հիմունքներով և հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամից աշխատավարձ և այլ հատուցումներ չի ստացել:

17 Պայմանականություններ

17.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

18 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի ստեղծման և վերահսկողության համար: Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականությունների մշակման և վերահսկման համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Հոգաբարձուների խորհրդին կատարած աշխատանքի վերաբերյալ:

Հիմնադրամի ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունն ու ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Հիմնադրամի գործունեությունը արտացոլելու նպատակով: Ուսումնական ծրագրերի, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Հիմնադրամը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները: Հիմնադրամը կառավարում է իր ծախսումները և զուտ ակտիվները՝ իր գործունեության շարունակականության կարողությունն ապահովելու և միևնույն ժամանակ՝ իրագործելով իր նպատակները ծախսերի օպտիմալացման միջոցով: Հիմնադրամի կողմից իր ռիսկերի չափման եղանակներում փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև չեն փոփոխվել ռիսկերի ենթարկվածությունը կամ դրանց կառավարման և չափման մեթոդները:

18.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի՝ նվիրատվություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով: Բացի այդ Հիմնադրամն ունի եվրոյով ավանդ:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,618	1
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**31,618**	**1**
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,142,913	710
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**3,142,913**	710
Զուտ արդյունք	**(3,111,295)**	**(709)**

Հոդված

31 դեկտեմբերի 2023թ.	ԱՄՆ դոլլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,518	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**35,518**	**-**
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորոկան պարտքեր	377,226	85
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**377,226**	**85**
Զուտ արդյունք	**(341,708)**	**(85)**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	311,129	34,171	71	9
	311,129	**34,171**	**71**	**9**

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

18.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդները և ժամկետային ավանդները:

Պարտքային ռիսկը կառավարվում է՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և տրամադրված փոխառությունների մասով պարտքային ռիսկը կառավարվում է դրանք բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու և վճարունակ հաճախորդների հետ համագործակցելու միջոցով:

18.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են ֆինանսական գծով կրեդիտորական պարտքերը՝ մինչև վեց ամիս մարման ժամկետով:

19 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

19.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է

Տրամադրած անտոկոս փոխառությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեն 3 տարի մարման ժամկետ: Տրամադրված փոխառությունների իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը: 15,331 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 16,493 հազար ՀՀ դրամ) գումարը գնահատվել է՝ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը զեղչելով 11%-ով:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 01.07.2025 16:28